ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 12

10 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2025թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ԻՆՆԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 13 անդամներ:

Բացակա էին՝ Արմեն Փ.Գրիգորյանը, Հայկ Մարիկյանը, Արմեն Ջուլհակյանը, Ջոն Կիրակոսյանը, Անուշ Իսպիրյանը,Վանո Հակոբյան, Լևոն Պապյան,Արմեն Դավթյան

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Արսեն Հարությունյան, Գագիկ Շիրմազանյան, Լուսինե Հովհաննիսյան,Լևոն Քալանթարյան, Ավետիկ Սարգսյան, Գևորգ Մանուկյան, Սամվել Անտոնյան, Արթուր Սավթալյան, Էլմիրա Ռևազյան, Գրիգոր Պապյան, Գայանե Ղալաչյան, Մարիամ Մանուկյան, Արման Սուքիասյան,Անուշ Կիրակոսյան, ՀՈԱԿ-ների տնօրեններ

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Արմեն Գրիգորյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Հասմիկ Մովսիսյանը

Մինչև օրակարգային հարցերին անդրադառնալը համայնքի ղեկավարի առաջարկությամբ և ավագանու անդամների համաձայնությամբ օրակարգային հարցերին ավելացվեց ևս 3 հարց:

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԻՆՆԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ *(ԶԵԿ. ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ)*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով՝ Ստեփանավան համայնքի ավագանին **որոշում է**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի ավագանու իններորդ նստաշրջանի երկրորդ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

Կողմ-13 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է **(կցվում է որոշում N 78-Ա)**

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2025Թ. ԲՅՈՒՋԵԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ *(ԶԵԿ. ԷԼՄԻՐԱ ՌԵՎԱԶՅԱՆ)*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով և 35-րդ հոդվածի 1-ին մասով՝ Ստեփանավան համայնքի ավագանին **որոշում է**

1. Ընդունել ի գիտություն համայնքի ղեկավարի կողմից ներկայացված հաղորդումը Ստեփանավան համայնքի 2025թ. բյուջեի երրորդ եռամսյակի կատարման մասին՝ համաձայն հավելվածի:

Կողմ- 13 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է **(կցվում է որոշում N 79-Ն)**

Համայնքի ղեկավարի առաջարկությամբ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի ավագանու 11 սեպտեմբերի 2025 թվականի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավանի մանկապատանեկան մարզադպրոց և ժամանցային կենտրոն» ՀՈԱԿ-ի մարզիչներին և սաներին մրցույթներում և առաջնություններում հաղթանակներ գրանցելու դեպքում դրամական խրախուսում տրամադրելու մասին» թիվ 73-Ա որոշման հավելվածում փոփոխություններ կատարելու մասին հարցը օրակարգից հանվեց ֆինանսական մասի անհամաչափության և անճշտության պատճառով:Ավագանու 12 անդամները կողմ քվեարկեցին, իսկ մեկ անդամ ձեռնպահ:

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒՐԱՍԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ 24 ՏԱՐԻ ԺԱՄԿԵՏՈՎ «ՍԱԳԱՄԱՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ *(ԶԵԿ. ԱՆՈՒՇ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ)*

Հիմք ընդունելով «ՍԱԳԱՄԱՐ» ՓԲԸ-ի ի դեմս տնօրեն Ստանիսլավ Յուրիի Մորոզովի կողմից ներկայացված դիմումը, Հայաստանի Հանրապետության Էներգետիկայի և բնական պաշարների նախարարիընդերքի տեղամասի ընդլայնման և թույլտվության ժամկետի երկարացման մասին 08.07.2015 թվականի թիվ 222-Ա հրամանը (լեռնահատկացում), 23.09.2025 թվականի թիվ 23092025-06-0046, 28.09.2025 թվականի թիվ 28092025-06-0004, 29.09.2025 թվականի թիվ 29092025-06-0014, 10.08.2025 թվականի թիվ 10082025-06-0002, 06.08.2025 թվականի թիվ 06082025-06-0041, 05.08.2025 թվականի թիվ 05082025-06-0055, 05.08.2025 թվականի թիվ 05082025-06-0062, 05.08.2025 թվականի թիվ 05082025-06-0043, 05.08.2025 թվականի թիվ 05082025-06-0048, 05.08.2025թ. թիվ 05082025-06-0046, 06.08.2025 թվականի թիվ 06082025-06-0022, 07.08.2025 թվականի թիվ 07082025-06-0052 վկայականները, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ պարբերությամբ, 76-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերով, ՀՀ կառավարության 12.04.2001 թվականի թիվ 286 որոշման հավելվածի 44-րդ կետի «ը» ենթակետով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝ Ստեփանավան համայնքի ավագանին **որոշում է**

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի Ուրասար բնակավայրի վարչական սահմանում գտնվող, 06-106-0134-0057 կադաստրային ծածկագրով, 2.09988 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության, 06-106-0134-0062 կադաստրային ծածկագրով, 12.09258 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության, 06-106-0134-0059 կադաստրային ծածկագրով, 0.12321 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության, 06-106-0134-0034 կադաստրային ծածկագրով, 0.20397 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, ընդերքի օգտագործման համար տրամադրված գործառնական նշանակության, 06-106-0134-0032 կադաստրային ծածկագրով, 0.0141 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, ընդերքի օգտագործման համար տրամադրված գործառնական նշանակության, 06-106-0134-0047 կադաստրային ծածկագրով, 4.41672 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, ընդերքի

օգտագործման համար տրամադրված գործառնական նշանակության, 06-106-0134-0046 կադաստրային ծածկագրով, 2.75806 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, ընդերքի օգտագործման համար տրամադրված գործառնական նշանակության, 06-106-0134-0036 կադաստրային ծածկագրով, 0.30055 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, ընդերքի օգտագործման համար տրամադրված գործառնական նշանակության, 06-106-0134-0051 կադաստրային ծածկագրով, 18.4709 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, ընդերքի օգտագործման համար տրամադրված գործառնական նշանակության, 06-106-0134-0054 կադաստրային ծածկագրով, 0.6831 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, ընդերքի օգտագործման համար տրամադրված գործառնական նշանակության, 06-106-0134-0056 կադաստրային ծածկագրով, 0.4358 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, ընդերքի օգտագործման համար տրամադրված գործառնական նշանակության, 06-106-0134-0043 կադաստրային ծածկագրով, 0.27757 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, ընդերքի օգտագործման համար տրամադրված գործառնական նշանակության հողամասերը՝ ընդերքի օգտագործման նպատակով, 24 տարի ժամկետով վարձակալության իրավունքով տրամադրել «ՍԱԳԱՄԱՐ» ՓԲԸ-ին՝ ի դեմս տնօրեն Ստանիսլավ Յուրիի Մորոզովի:

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի Ուրասար բնակավայրի վարչական տարածքում գտնվող, ընդհանուր՝ 41.87644 հա հողամասերի համար տարեկան վարձավճարի չափ սահմանել՝ 6281466 /վեց միլիոն երկու հարյուր ութսունմեկ հազար չորս հարյուր վաթսունվեց/ ՀՀ դրամ:

1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կողմերի միջև կնքել հողամասերի վարձակալության պայմանագիր:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ- 13 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է **(կցվում է որոշում N 80-Ա)**

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ *(ՋԵԿ. ԱՆՈՒՇ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ)*

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի զարգացման, քաղաքաշինական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտություն է առաջանում սահմանված կարգով օտարել համայնքային սեփականություն հանդիսացող հողերը:

Ելնելով վերը նշվածից, հիմք ընդունելով՝ ՀՀ կառավարության 27.04.2006 թվականի թիվ 570-Ն որոշումը, 18.12.2024 թվականի թիվ 18122024-06-0049, 18.08.2025 թվականի թիվ 18082025-06-0082 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 63-րդ և 67-րդ հոդվածներով՝ Ստեփանավան համայնքի ավագանին **որոշում է**

1. Թույլատրել Ստեփանավան համայնքի ղեկավարին համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին համապատասխան, աճուրդով վաճառքի սահմանված կարգով օտարել համայնքի սեփականությունը հանդիսացող հետևյալ հողամասերը՝
    - Մարզ Լոռի, համայնք Ստեփանավան գյուղ Ուրասար 6-րդ փողոց 15 հողամաս հասցեում գտնվող 06-106-0006-0007 կադաստրային ծածկագրի 0.20693 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական գործառնական նշանակության հողամասը, մեկնարկային գին սահմանել՝ 3600000 /երեք միլիոն վեց հարյուր հազար/ ՀՀ դրամ:
    - Մարզ Լոռի, համայնք Ստեփանավան Ստեփանավան ք. Անտառային փողոց 4-րդ նրբանցք 12/2 հողամաս հասցեում գտնվող 06-007-0059-0047 կադաստրային ծածկագրի 0.04593 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, այլ հողեր գործառնական նշանակության հողամասը, մեկնարկային գին սահմանել՝ 2350000 /երկու միլիոն երեք հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ- 12 Դեմ- 0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է **(կցվում է որոշում N 81-Ա)**

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԱՅԱՆ 1-ԻՆ ԵՎ 2-ՐԴ ՆՐԲԱՆՑՔՆԵՐԻ, 409 ԴԻՎԻԶԻԱ ՆՐԲԱՆՑՔԻ ԵՎ ՆԵԼՍՈՆ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ՏՈՒՖԵ ՍԱԼԱՐԿՈՒՄՈՎ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՆՄԱՆ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹ ՀՐԱՏԱՊ ԵՂԱՆԱԿՈՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ *(ԶԵԿ. ԱՐՍԵՆ ԱՎԱԳՅԱՆ)*

Ղեկավարվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Ստեփանավան համայնքի ավագանին. **որոշում է**

1. Թույլատրել Ստեփանավան համայնքի Աղայան 1-ին և 2-րդ նրբանցքների, 409 Դիվիզիա նրբանցքի և Նելսոն Ստեփանյանի փողոցների տուֆե սալարկումով հիմնանորոգման աշխատանքների բաց մրցույթի անցկացումը հրատապ եղանակով՝ հայտերի ներկայացման ժամկետ սահմանելով առնվազն տասը օրացույցային օր:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է **(կցվում է որոշում N 82-Ա)**

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 14 ՓԵՏՐՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 06-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ *(ԶԵԿ. ԱՆՈՒՇ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ)*

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով՝ Ստեփանավան համայնքի ավագանին **որոշում է**

1. Ուժը կորցրած ճանաչել Ստեփանավան համայնքի ավագանու 14 փետրվարի 2025 թվականի «ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» թիվ 06-Ա որոշումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ- 13 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է **(կցվում է որոշում N 83-Ա)**

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ *(ՁԵԿ. ԱՆՈՒՇ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ)*

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի զարգացման, քաղաքաշինական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտություն է առաջանում սահմանված կարգով օտարել համայնքային սեփականություն հանդիսացող հողերը:

Ելնելով վերը նշվածից, հիմք ընդունելով՝ ՀՀ կառավարության 27.04.2006 թվականի թիվ 570-Ն որոշումը, 17.01.2025 թվականի թիվ 20012025-06-0003, 17.01.2025 թվականի թիվ 17012025-06-0026, 17.01.2025 թվականի թիվ 17012025-06-0055, 17.01.2025 թվականի թիվ 17012025-06-0041, 17.01.2025 թվականի թիվ 17012025-06-0051, 24.10.2024 թվականի թիվ 24102024-06-0062, 19.03.2025 թվականի թիվ 19032025-06-0025, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 63-րդ և 67-րդ հոդվածներով՝ Ստեփանավան համայնքի ավագանին **որոշում է**

1. Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի համապատասխան, աճուրդով վաճառքի սահմանված կարգով՝ օտարել համայնքի սեփականությունը հանդիսացող հետևյալ հողամասերը՝
   - Մարզ Լոռի, համայնք Ստեփանավան Ստեփանավան ք. Սարալանջ թաղամասի 4-րդ փողոց 2 հողամաս հասցեում գտնվող 06-007-0344-0028 կադաստրային ծածկագրի 0.14357 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, մեկնարկային գին սահմանել՝ 10170000 /տասը միլիոն մեկ հարյուր յոթանասուն հազար / ՀՀ դրամ:

- Մարզ Լոռի, համայնք Ստեփանավան Ստեփանավան ք. Սարալանջ թաղամասի 5-րդ փողոց 3 հողամաս հասցեում գտնվող 06-007-0344-0025 կադաստրային ծածկագրի 0.125 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, մեկնարկային գին սահմանել՝ 9440000 /ինը միլիոն չորս հարյուր քառասուն հազար/ ՀՀ դրամ:
- Մարզ Լոռի, համայնք Ստեփանավան Ստեփանավան ք. Սարալանջ թաղամասի 5-րդ փողոց 1 հողամաս հասցեում գտնվող 06-007-0344-0029 կադաստրային ծածկագրի 0.125 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, մեկնարկային գին սահմանել՝ 9440000 /ինը միլիոն չորս հարյուր քառասուն հազար/ ՀՀ դրամ:
- Մարզ Լոռի, համայնք Ստեփանավան Ստեփանավան ք. Սարալանջ թաղամասի 4-րդ փողոց 4 հողամաս հասցեում գտնվող 06-007-0344-0027 կադաստրային ծածկագրի 0.13806 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, մեկնարկային գին սահմանել՝ 9780000 /ինը միլիոն յոթ հարյուր ութսուն հազար / ՀՀ դրամ:
- Մարզ Լոռի, համայնք Ստեփանավան Ստեփանավան ք. Սարալանջ թաղամասի 5-րդ փողոց 5 հողամաս հասցեում գտնվող 06-007-0344-0026 կադաստրային ծածկագրի 0.125 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, մեկնարկային գին սահմանել՝ 9440000 /ինը միլիոն չորս հարյուր քառասուն հազար/ ՀՀ դրամ:
- Մարզ Լոռի, համայնք Ստեփանավան Ստեփանավան ք. Սարալանջ թաղամասի 1-ին փողոց 6 հողամաս հասցեում գտնվող 06-007-0338-0020 կադաստրային ծածկագրի 0.125 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության,

բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, մեկնարկային գին սահմանել՝ 9440000 /ինը միլիոն չորս հարյուր քառասուն հազար/ ՀՀ դրամ:

- Մարզ Լոռի, համայնք Ստեփանավան Ստեփանավան ք. Սարալանջ թաղամասի 1-ին փողոց 8 հողամաս հասցեում գտնվող 06-007-0338-0027 կադաստրային ծածկագրի 0.12692 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, մեկնարկային գին սահմանել՝ 9580000 /ինը միլիոն հինգ հարյուր ութսուն հազար / ՀՀ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից

Կողմ-12 Դեմ- 0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է **(կցվում է որոշում N 84-Ա)**

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԻՆՆԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ *(ԶԵԿ. ՀԱՍՄԻԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ)*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ և 64-րդ հոդվածներով Ստեփանավան համայնքի ավագանին **որոշում է**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի ավագանու իններորդ նստաշրջանի երկրորդ նիստի գումարման օր սահմանել 14.11.2025թ. ժամը 14.30 -ին:

Կողմ- 13 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է **(կցվում է որոշում N 85-Ա)**

Ավագանու անդամներ

ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀՐԱՀԱՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ԱՆՈՒՇ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՎԱՐՍԻԿ ԱՍՐՅԱՆ

ԱՏՈՄ ԳԱԳԻՆՅԱՆ

ԱՐԾՐՈՒՆ ՀԱԿՈԲՅԱՆ

ԼԻԼԻԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՄԱՅԱԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՄԱՐՏՈՒՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՍՅՈՒԶԱՆՆԱ ՆԱԶԱՐՅԱՆ

ԱՂՈՒՆԻԿ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

ԱՆԴՐԱՆԻԿ ՏՈՆՈՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ՊԱՊՅԱՆ

Համայնքի ղեկավար՝

ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ _____

Նիստն արձանագրեց՝ Հասմիկ Մովսիսյանը

_____